

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ.

Բ.

Փրկչի ֆարգուիթիւնն ու դորա աղբիւրները.

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ սկիզբ է առնում Քրիստոսի քարոզութեամբ. ուստի առաջին հարցն այստեղ այն է, ինչպէս ակնարկեցինք, թէ ի՞նչ է քարոզել Քրիստոս. իսկ այդ հարցին պատմական ճշտութեամբ պատասխանելու համար մենք պէտք է նախ պարզ դադափտը ունենանք, թէ ի՞նչ աղբիւրներէնք ենք առնում Քրիստոսի քարոզութիւնը, որչափ արժանահաւատ են և ստոյգ այդ աղբիւրները: Ներկայումս Նոր Կտակարանի քննադատների մէջ տիրապետող կարծիք է, որ բացարձակ նախապատուութիւն պէտք է այստեղ երեք առաջին, այդպէս կոչուած՝ համասեմ* աւետարաններին տալ: Մի կողմ թողնելով այն բազմադիմի մութ հարցերը Յովհաննու աւետարանի հեղինակի ու ժամանակի մասին, որոնք անցեալ դարում բազմաթիւ գիտնականների զբաղեցրել են և դեռ շատ շատերին կղքադեցնեն, մինչև կարելի լինի նոցա նկատմամբ մի ընդհանուր եզրակացութեան յանգել՝ այսքանը պարզ է մեծամասնութեան համար, որ աւետարանին այստեղ նպատակ չէ ունեցել

* Համատես կոչուում են Մատթէոսի, Մարկոսի և Լուկասու աւետարաններն իրար հետ ունեցած մեծ նմանութիւնների պատճառաւ, որ հարկադրում է երբեք միատեղ, մի ընդհանուր տեսողութեան ներքոյ դնել, որպէս զի իւրաքանչիւրի առանձնայատկութիւնները որոշել կարողանանք:

իւր լսածը կամ տեսածը նոյնութեամբ վերարտադրելու՝ աշխատելով չշփուել նախնական աւանդութիւնից, այլ հաղորդել է աւետարանական ճշմարտութիւններն այնպէս, ինչպէս իւր հոգու մէջ էին ձևակերպութիւն ստացել ու պատկերանում՝ շաղկերով լսածի հետ իւր սեփական խորհրդածութիւններն այնպիսի սերտ կերպով, որ այլևս անհնարին է մէկը միւսից զատել: Ուստի իբրև պատմական աղբիւր աւետարանի նախնական քարոզութեանը ծանօթանալու համար նա երկրորդական նշանակութիւն ունի. թէպէտ դաւանաբանական և այլ տեսակէտներով նորա արժէքը շատ մեծ է ու կմնայ: Իսկ Նոր Կտակարանի միւս գրուածների մէջ միայն սակաւաթիւ հատուկտոր տեղեկութիւններ կան փրկչական քարոզութեան մասին:

Յիրաւի միւս աւետարանների պատմական նշանակութեան նկատմամբ ևս շատ անգամ կասկածներ յայտնուել են և մինչև այսօր նոյն իսկ լուսաւորեալ, գիտնական շրջաններում ամենատարօրինակ ու ավելցիկեղ կարծիքներ են յայտնուում նոցա ծագման և վաւերականութեան մասին. բայց իսկական, գործին հմուտ քննադատների կէս դար շարունակ թափած աշխատանքը այնչափ պարզել է նոցա պատմական և դրական արժէքը, որ այդպիսի կասկածներն ու կարծիքները միայն քմիծաղ և արդար զայրոյթ յարուցանել կարող են: Այս աւետարաններն ևս զուտ պատմութիւններ չեն՝ որոշ անցքեր նկարագրելու կամ հետագայ սերունդներին ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդելու գիտմամբ գրուած, այլ նոցա առաջին նպատակն է աւետարանական ճշմարտութիւնները տա-

բաժել, համոզել և հաւատ յառաջ բերել. բայց որովհետեւ դորա համար իբրեւ միջոց ծառայել է Փրկչի գործունէութեան պարզ նկարագիրը, որ գէթ ըստ մեծի մասին նախնաւանդ ճշտութեան գրողմ է կրում, ուստի նորա այնուամենայնիւ տառնակարգ պատմական աղբիւրներ են և նոցա բովանդակութիւնը, մանաւանդ ինչ բուն քարոզչութեան է վերաբերում, նաեւ արտաքին գրական տեսակէտից ամէն կերպ վստահելի երեք աւետարանների աչքի դարնող նմանութիւնը յառաջ է գալիս հենց նրանից, որ քրիստոնէական աւանդութիւնը շատ միայն որոշ ձեւակերպութիւն ստացաւ թէ Քրիստոսի կեանքի յայտնի դէպքերի և թէ նորա խօսքերի յատուկ ժողովածուներ կազմուեցան, նախ բերանացի և ապա գրաւոր աւանդութեամբ։ Օրինակ, երբ Ղուկաս աւետարանիչը, որ ամէնից ուշ է գրել՝ հաւանականաբար 80—90-ական թուականներին, գրի էր առնում այդ՝ հրէաների մէջ և երբայական հոգւով ու ոճով կազմուած աւանդութիւնները՝ իրաւունք չէ համարել մինչեւ անգամ նոցա լեզուն, արտայայտութեան եղանակը մոխել, չնայելով որ յոյն էր աղբաւ և հմուտ յունաբան, այնչափ հաստատուն կերպարանք ունէին նոքա քրիստոնէական համայնքի մէջ նուիրագործուած։

Մի հանգամանք կայ, որ առանձնապէս նպաստում է աւետարանական պատմութիւնը մեր ժամանակակիցների աչքում կասկածելի դարձնելու, այդ նորա մէջ եղած հրաշքների նկարագիրն է։ Բնական դիտութիւնների զարգացումը վերջին դարերում բերել է մարդոց այն եզրակացութեան, որ բնութեան որոշ հաստատուն օրէնքներ կան՝ տիեզերքի մէջ ամէն ինչ նոցա համաձայն է կատարուում, մի ներքին անհրաժեշտութեամբ շարժակալուած են նոքա միմեանց հետ, և ոչ մի դիտելիք այդ կապը խզել չի կարող. իսկ հրաշք նշանակում է մի արտաքին դիտելիքի միջամտութիւնը բնական օրէնքների մէջ, նոցա հակառակ կատարուած գործողութիւն, — որ լինել չի կարող։ Հրաշք ասածը ուրեմն մարդոց երևակայութեան ծնունդ է և այն պատմութիւն-

ները, որանց մէջ հրաշքներ են նկարագրուում՝ ստոյգ չպէտք է համարուին։ Սակայն այսպէս դատողները մի ուղիղ եզրակացութիւնից սխալ հետևութիւններ են հանում։ Ճշմարիտ է որ մարդու մտածողութիւնը բնութեան սահմանների մէջ է միայն շարժում և այդ սահմաններից դուրս ոչ մի բան մեր մտքի համար իրական չէ. բայց ո՞վ է իրաւունք տալիս մեզ պնդելու, թէ մեր միտքն ամէն տեղ հասնում է, թէ ինչ որ իրական չէ մեզ համար, ինչ որ մտքով մենք չենք ըմբռնում՝ իրօք գոյութիւն էլ չունի։ Մեր միտքը մեզ օտում է միայն, թէ անբնական բան չկայ, իսկ մենք առանց հիմքի հետևեցնում ենք, թէ չի կարող լինել ուրեմն նաեւ գերբնական բան, և երբ մէկն այն համոզումն է յայտնում, թէ գերբնականը կայ և մատչելի է նոյն իսկ մեր հոգուն՝ ոչ թէ մտածողութեան, այլ հոգեկան կարողութիւնների այն առանձնաւորուած զուգորդութեան միջոցաւ, որ հաւատ է կոչուում ծիծաղում ենք նորա միամտութեան վերայ. ծիծաղում այնպէս, ինչպէս բարոյապէս անանկ մարդը բարոյական բարձր սկզբունքներով սղեւորուողի և առաջնորդուողի վերայ է ծիծաղում, ինչպէս ծիծաղում է բիրտ, անճաշակ մարդը գեղարուեստի և բնութեան գեղեցկութիւնների նկատմամբ ցոյց տուած զմայլանքի վերայ։ Մտքի բացարձակ գերիշխանութեան երկրպագու ուսումնականը պատրաստ է յաճախ թոյլ տալու, որ նկարիչը, բանաստեղծն ու բարոյագէտը ունենան իրեն բոլորովին անձանօթ զգացումներ և պատկերացումներ, բայց թոյլ չէ տալիս նոյնը հաւատացողին, կրօնական անձնաւորութեան մինչդեռ այդ ի հարկէ ակներեւ անարգարութիւն է ու նախապաշարմունք։ Մենք ամէն քայլափոխում հանդիպում ենք երեւոյթների, որոնք մեզ պէտք է համոզեն, թէ բնականի և գերբնականի սահմաններն ամենեւին որոշ չեն մեզ համար, և եթէ հաստատ իսկ լինէր, թէ ոչինչ չկայ բնութիւնից դուրս՝ բնութեան շրջանակում նոյն իսկ տեղի են ունենում իրողութիւններ, որ երբեք մեզ ձանօթ բնութեան օրէնքներով բա-

ցատրել չենք կարողանայ: Ո՞վ կարող է օրինակ բացատրել, թէ ինչից է յառաջ գալիս մի հոգու ազդեցութիւնը միւսի վերայ, հոգու ազդեցութիւնը մարմնի վերայ, — և մինչեւ յերեւել հասնում: Ինչպէս է, որ զօրեղ կառնքն ու զօրեղ հաւատը ներգործում և աչքի ընկնող փոփոխութիւններ են յառաջ բերում մարմնական կեանքի մէջ: Յամենայն դէպս մենք մեր սահմանափակ դատողութեամբ վճռել չենք կարող, թէ արդեօք գոյութիւն ունի գերբնականը կամ երբ և իցէ գերբնական ազդեցութեամբ հրաշք եղել է: այլ պէտք է աշխատենք մեր առաջ դրած պատմութիւնը հասկանալ այնպէս, ինչպէս կայ՝ առանց նորա համար նոր օրէնքներ հնարելու*:

Իսկ ի՞նչ է ներկայացնում Քրիստոսի կատարած հրաշքների պատմութիւնը: Համատես աւետարաններից պարզ երևում է նախ, որ Քրիստոս ինքը հետամուտ չէր հրաշքներ գործելու և խոյս էր տալիս մանաւանդ այնպիսի դէպքում, երբ նորանից պահանջում էին հրաշքն իբրեւ մի դիւթական նշան, որով նորա Մեսիա լինելը, գերբնական զօրութիւնների հետ կապ ունենալը պէտք է ապացուցանուէր: Կարեւոր է առանձնապէս Մարկոս աւետարանչի տուած այն տեղեկութիւնը, թէ այսպիսի մի դէպքում, երբ նա գործ ունէր նախապաշարուած, ճշմարիտ հաւատքի անընդունակ ամրոխտ հետ՝ չկարողացաւ հրաշք անել: Նորա մասին պատմուած հրաշքներն այնպիսի քմահաճոյ գործողութիւններ չեն, որպիսիք պատմուում են նախնի նշանաւոր անձնաւորութեանց մասին, այլ դիւաւորապէս բժշկութիւններ, որոնք կարծես ինքնաբերաբար բղիւում են նորա անձից, նորա ըստ ինքեան հրաշալի ներկայութիւնից: Ինչպէս նա սլարդ կերպով պատկերացնում է Յովհաննէս Մկրտչի աշակերանների առաջ՝ այսօր ևս աւետարանական պատմութեան մէջ խորամուխ լինելով մենք այն

տպաւորութիւնն ենք ստանում, որ ուր նա ոտք էր դնում՝ ամէն ցաւ և նեղութիւն պէտք է տեղի տար, պէտք է բժշկուէին մարմինները, որպէս զի հոգիների բժշկութեան և երանութեան համար ճանապարհ հարթուէր: Երկրորդական հարց է այստեղ, թէ արդեօք բոլոր հրաշքները կատարուել են այնպէս, ինչպէս պատմուած են աւետարանների մէջ, բաւական է միայն մէկը ընդունել կատարուած՝ ընդունել, որ Քրիստոս թէ գործել և թէ խօսել է ինչպէս ոչ ոք մարդկանցից, որ գերբնականի, երկնաւորի, աստուածայինի ներգործութիւնը ակներև կերպով յայտնուել է նորա իւրաքանչիւր շարժման մէջ: Իսկ առանց այդ ընդունելու ոչ աւետարան կարելի է հասկանալ, ոչ քրիստոնէութիւն: Եթէ տիեզերքի մէջ միայն ընտելութեան կոյր օրէնքն է իշխում, և ոչ մի վերին զօրութիւն նորա ընթացքը փոխել, մեր ձգտմանը դէպի բարին ու դէպի կատարեալը ժառայեցնել չի կարող, ապա ի՞նչ Փրկիչ, ի՞նչ հոգեւոր վերածնութիւն, ի՞նչ բարոյական կատարելութիւն ու անմահութիւն: Այս բոլոր գաղափարներն այն ժամանակ միայն արժէք ունին մեզ համար, երբ մենք մեզ և մեր շրջապատին չենք նայում իբրեւ մի անխորհուրդ մեքենայական կադմութեան վերայ, այլ մի վսեմ նպատակ ենք տեսնում մեր առաջ, որ մեր կեանքին բովանդակութիւն է տալիս և որին հասնելու համար մենք օգնութիւն ենք ստանում նպատակը գնողից՝ կարողութիւն մի գերբնական աշխարհից մեր առջև եղած բնական արգելքներին յաղթելու: Բայց ամէն մի այդպիսի օգնութիւն ըստ ինքեան մի հրաշք է, և Քրիստոսի յայտնութիւնը, որ քրիստոնեաների համադմամբ բոլոր մարդկութեան համար այդ օգնութիւնը բերել է՝ ամենամեծ հրաշքը: Նորա փրկչական գործունէութիւնը իբրեւ հրաշալիք պէտք է ներկայանայ մեզ նաև այն դէպքում, երբ բոլոր նորա հրաշագործութիւնների պատմութիւնը հանենք մէջտեղից: Ի՞նչպէս՝ աւետարանների մէջ կան տեղեր, ուր հրաշքը իբրեւ հաւատք դարձնող և զօրացնող միջոց է նկատուած, սակայն Փրկիչն ինքը բողոքում է, որ ժո-

* Յիշեցնում ենք, որ այստեղ, ինչպէս ուրիշ շատ տեղերում, մենք չիղուում ենք Պրոֆ. Հառնակի յայտնած մտքերից և տարբեր հայեացք մէջ բերում:

դովուրդն առանց նշան տեսնելու հաւատալ չէր կամենում, և իրօք, ինչպէս վերեւ ակնարկեցինք, ճշմարիտ հրաշքը կարող էր կատարուել միայն այնտեղ, ուր արդէն հաւատք կար՝ հոգեկան այն կարողութիւնը, որ Աստուծոյ կողմից եկած օգնութիւնը, — լինի այդ օգնութիւնը երեւելի թէ աներեւոյթ հրաշքով, — ըմբռնելու ընդունակ է դարձնում, այլապէս արտաքին հրաշալի գործողութիւնը կախարդական մի բան կհասնարուի և աննպատակ կանցնի։ Աւետարանի այն խօսքն է ճշմարտութեամբ այստեղ, թէ ուր հաւատք, կամ գոնէ հաւատալու պատրաստակամութիւն կայ, հրաշքն աւելի ևս կգործեն ու կամրապնդէ. ուր պակաս է՝ եղածն ևս գուցէ անհետանայ։

Այսպէս ուրեմն, այն կարծիքը, թէ հրաշք ըստ ինքեան լինել չի կարող, և դորան հետեղ անվստահութիւնը աւետարանական պատմութեան նկատմամբ՝ յառաջ է գալիս իսկապէս Քրիստոսի հրաշագործութիւնների իմաստը սխալ ըմբռնելուց։ Պէտք է չմոռանանք միևնոյն ժամանակ, որ աւետարանիչներն այնպիսի դարում էին ապրում, երբ հրաշքի մասին բոլորովին տարբեր գաղափար ունէին, երբ մեր բնական համարած շատ բաներ ևս հրաշք էին թուում։ Ուստի նոցա պատմածն ըստ արժանւոյն գնահատելու համար պէտք է աշխատենք կարելի եղածին չափ յարմարուել այդ դարի ըմբռնմանը, և կտեսնենք, որ փրկչական յայտնութեան աստուածային բնաւորութիւնըն ընդունելուց յետոյ՝ ամէն ինչ այստեղ իւր բնական գոյնն է ստանում և հրաշքները շատ ներդաշնակ միութիւն են կազմում ամբողջ պատմութեան հետ։ Անուրաւ նախ է յամենայն դէպս, որ իրենք աւետարանիչները ոչինչ բան դիտմամբ չեն ստեղծել, չեն աւելացրել, չեն ծաղիկեցրել, այլ հաւատարմութեամբ հաղորդել են ինչ որ իրենց էր աւանդած՝ հարկաւ իրենց յատուկ հայեցակէտը պահպանելով, իրենց ներսը լուսաւորող հաւատքի լոյսը սփռելով նաև տուած նկարագրութեան վերայ։ Այդ պատճառաւ աւետարաններն ըստ ամենայնի վստահելի և ճշգրիտ պատմութիւն են տալիս՝ ինչ տե-

սակէտով և կամենանք նայել նոցա վերայ, միայն թէ այստեղ ևս կարողանանք գործադրել իւրաքանչիւր հին գրական երկասիրութիւն ուսումնասիրելու համար անհրաժեշտ միջոցները՝ ուղիղ և բազմակողմանի հասկացողութիւն ունենանք այն պայմանների մասին, որոնց մէջ նոքա յառաջ են եկել։ Բայց նաև նոցա համար, որոնք աւետարաններն իբրև մի ամբողջութիւն ըմբռնել կամ այստեղ պարունակած գերբնական տարրի հետ հաշտուել չեն կարող՝ այնչափ առատ նիւթ կայ խորհրդածութեան և հոգեւոր շինութեան, այնպիսի յաւիտենական ճշմարտութիւններ գրեթէ իւրաքանչիւր տողի մէջ, որ ոչ ոք իրաւունք չունի իբրև իւր համար խորթ ու անմարսելի բան անուշագիր թողնելու, այլ պէտք է կրկին և կրկին անգամ ձեռք առնէ ու աշխատէ միշտ աւելի խոր թափանցել նոցա մէջ, այն ժամանակ կտեսնէ, որ սկզբում մութ եղածն ևս հետզհետէ պարզուում է, ու եթէ դեռ շատ բան մութ է մնում՝ պարզուածները աւելին քան ուրիշ որևէ գրքից կամ այլ աղբիւրից ստանալ կարոյ էր։

Ինչպէս յայտնի է, աւետարանները Քրիստոսի ամբողջ կեանքի նկարագիրը չեն տալիս, նոցանից ամենահինը՝ Մարկոսի աւետարանը, որ այժմեան քննադատների ընդհանրացած կարծիքով իբրև աղբիւր է ծառայել միւս երկու համատես աւետարանների համար, սկսում է անմիջապէս Քրիստոսի մկրտութիւնից, այսինքն այն կէտից, ուր նա սկսեց իւր հրապարակային գործունէութիւնը։ Եւ եթէ Պողոս առաքելի թղթերի ու գործք առաքելոցի միջոցաւ ծանօթանանք ի մօտոյ առաջին առաքելական շրջանի պատմութեանը՝ կտեսնենք որ այստեղ աւետարանական քարոզութեան կենտրոն փրկչի վերջին տնօրէնութիւններն են՝ խաչելութիւնը, մահը, քարոզութեան նիւթ տալիս են մկրտութիւնից յետոյ նորա խօսած ու գործածը, իսկ նորա նախ քան մկրտութիւն վարած կեանքի մասին ամենեւին խօսք չի լինում։ Այն հարցը, թէ ով էր արդեօք, ինչպիսի ծագում ունէր նա, որ իբրև երկնաւոր վարդապետ հան-

դէս եկաւ և իբրև Փրկիչ կնքեց իւր կեանքը՝ համեմատաբար աւելի ուշ պէտք է զարթնէր քրիստոնէական համայնքի մէջ. երբ առաջին բուռն ոգևորութիւնից յետոյ վերջինս սկսաւ հաշիւ տալ իրեն, սառը դատողութեան տակ ձգել և բացատրել իւր ընդունած հաւատքի հիմունքները, և այդ հարցի պատասխանը եղան մի կողմից Մատթէոս և Ղուկաս աւետարանիչների յառաջ բերած ծննդեան պատմութիւնները, միւս կողմից Յովհաննէս աւետարանի վերապաց տեսութիւնը աստուածային Բանի մասին. Ուստի, երբ մենք միայն զուտ նախնական աւանդութիւնը առնել ենք կամենում, պէտք է այդ բոլորը մի կողմ՝ թողնենք և մեր ուշադրութիւնը կենտրոնացնենք երեք կէտի շուրջ. ինչ է քարոզել Յիսուս և ինչ կոչումով գործել. ինչպէս է լրացրել այդ կոչումը իւր մահով. ինչ տալստութիւն են ստացել Նորանից իւր աշակերտները և հետագաներին աւանդել:

Դալով այն խնդրին, թէ կեանքի ճրպիօնի գպրոցից է անցել նա արդեօք նախ քան իւր հրապարակ ելնելը՝ մենք ոչ մի պատմական տեղեկութիւն չունենալով Նորա երեսնամեայ կեանքի մասին, բացասական կողմով միայն մի քանի եղրակացութիւններ կարող ենք հանել մեզ յայտնի նիւթից: Այդպէս, Նորա քարոզութեան եղանակը, գրեթէ իւրաքանչիւր արտայայտութիւնը՝ պարզ ցոյց է տալիս, որ նա ոչ ժամանակակից հրէայ բարունկների մօտ է աշակերտել, ոչ յոյն փիլիսոփաների, գիտունների հետ շփումն ունեցել: Յիրաւի նա բոլորովին ազատ կերպով գործ է ածում Հին հասկարանը, բայց ոչ դպրոցականի՝ դպիրների ու փարիսեցիների պէս, ինչպէս վկայում են նաև շրջապատողները: Յիսուսի Դալիլիայում, ուր նա կեանքի մեծագոյն մասն անցրել էր, խիստ շատ կային հեթանոսներ, շատ տարածուած էր յունաց լեզուն ու քաղաքակրթութիւնը, և ամենայն հաւանականութեամբ նա ծանօթ էր այդ լեզուին, բայց ոչ անշուշտ յոյն փիլիսոփաների կամ հեղինակների գրութիւններին ու հայեացքներին. եթէ նա խօսել է շատ այն-

պիսի խնդիրների մասին, որոնք սոցա գլուխաձեւների համար ևս նիւթ են եղել, խօսել է բոլորովին ուրիշ սգւով, ուրիշ ըմբռնմամբ, և ուրիշ սկզբունքներով:—Ոչ մի կապ չի կարող ունեցած լինել նա նոյնպէս էսսենացի կոչուած հրէական ազանդի հետ, ինչպէս ենթադրել են ոմանք, առանց պարզ դադարի ունենալու այդ ազանդի մասին և գիտելու, որ սորա առաջնորդող սկզբունքները՝ օրինական լուացումներ ու մանրակրկիտ մաքրութիւն, հգնական կենցաղ, խտրականութիւն, արտաքոյ կարգի օրինակատարութիւններ ևլն, տրամագծօրէն հակառակն են շատ կէտերում Քրիստոսի քարոզածներին: Նա յաճախ յիշեցնում է, որ ինչ ինքը խօսում և գործում է՝ բոլորը երկնաւոր Հօր թեւադրութեամբն ու կոմբոյն է, այս աշխարհից ոչինչ չէ ստացել: Եւ իրօք, աւետարանական իմաստութեան համար ուրիշ աղբիւր որոնել, տարբեր այն ներքին առանձնայատուկ յարաբերութիւնից որ երկնաւոր Հօր և իւր Միածին Որդու մէջ կար՝ աւելորդ ջանք պէտք է լինի միշտ: Այստեղ այնպիսի բան չկայ, որը ասելու կամ անելու համար անհրաժեշտ համարուէր որ և է դպրոց յաճախած լինելը, բայց և ամբողջն ասուած է այնպէս, ինչպէս չէ ուսուցել ոչ մի դպրոց աշխարհի մէջ, ոչ իսկ ուսուցանել կարող է: Եթէ աւետարանական վեհ և միանգամայն շատ պարզ ճշմարտութիւններն ըմբռնելու համար ընդարձակ գիտութիւն և փիլիսոփայական դատողութիւն չի պահանջուում, այլ բարոյական կենդանի նրբազգացութիւն և կրօնական խոր հայեցողութիւն՝ նոցա Քարոզիչն ևս բնականաբար այս վերջին տեսակի առաւելութիւններով պէտք է օժտուած լինէր, առաւելութիւններ, որոնք յառաջ են գալիս և զարգանում մի վերին դադարակարան աշխարհի հետ ունեցած շփումով: Եւ աւետարան կարգանցովն այն տալստութիւնն է ստանում, որ Քրիստոս այս աշխարհի վերայ շրջելով՝ չունչ է առել այդ վերին աշխարհի մթնոլորտից, նորա զաղտնիքները պարզել իւր ունիւնդիրների առաջ և նորա շնչով ոգևորել ու կենդանացրել այս աշխարհի օրդիւններին: Բայց

նա վերացական կերպով չէ խօսել՝ յափըշտակուած ու կտրուած այս աշխարհից, այլ նորա խօսքի նիւթը եղել են սոսկական ամենօրեայ կեանքի երեւոյթները, բարոյական ամենակնճառ խնդիրներ պարզաբանել է նա բնութեան ամենապարզ օրինակներով՝ առակներով է խօսել, և վայրի շուշանից սկսած մինչև Երուսաղէմի հոյակապ տաճարը՝ ամէն առարկայ իբրև Աստուծոյ նախախնամող զօրութեան պատկեր ընդունելով՝ ցոյց տուել թէ ինչպէս պէտք է գործադրուի արարածական բնութեան մէջ Արարչի կամբքը։ Նա մարդոց վշտին վշտակից, ուրախութեանը ուրախակից է եղել, և այս մեղաւոր աշխարհը ամենամութ գոյներով նկարագրելով հանդերձ՝ չի կամեցել որ մարդիկ ճգնաւորներ լինեն ու քաշուեն աշխարհից, այլ սովորեցրել է երանութեանց դրախտ դարձնել այն, Աստուծոյ արքայութեան ճանապարհները ճանաչելով և ըստ այնմ ընթանալով։



ՀԱՂԲԵՏ Է ՍԱՆՔԻՆ

Վ. Ա. Ն. Ք. Ե. Բ. Ը.

(967—1300).

(Շարունակութիւն) *

Գ. Լ. Ո. Ի. Թ. Գ.

Սանաճնի հոշակը եւ վայելած հեղինակութիւնը.

Այսպիսի գիտութեամբ և առաքինի վարքով ձօնացած Սանաճնիք անշուշտ երկար ժամանակ անյայտութեան մէջ մնալ չէր կարող։ Այդ այնպիսի մի ժամանակ էր, երբ գիտական և բանիմաց վարդապետներին մատերի վերայ կարելի էր հաշուել և ահա արեւելքում իրար ետեից հանդէս են գալիս — Դեոսկորոս, Յակովբ և Անանիա Սանաճնեցի

գիտնական վարդապետները։ Այն ինչ Հոյոց մնացած վանքերը իրենց ժամանակին շատ ու քիչ նշանակութիւն ունենալուց և հեղինակութիւն վայելելուց յետոյ այժմ արդէն միութեան քօղով էին ծածկուել՝ Սանաճնիք խաւարի մէջ իբրև մի լուսատու փայտ է երևում որ բոլորի ուշքը իրեն վերայ է դարձնում ու ամէն կողմից զալիս են այնտեղ ուսանելու և գիտութեան պաշարով ծանրաբեռնուած յետ դառնալու և գործելու իրենց անդերում։ Յովհաննէս արքան կաթողիկոսական տիպոսի վրայ բաղմելու է հրաւիրում նորա առաջնորդին Դեոսկորոս արքեպիսկոպոսին. ամենայն Հայոց սրբադիւտայն քահանայապետները անմիջապէս Սանաճնի գիտնականներին էին դիմում իրենց հրամաններով և խնդիրներով այս կամ այն գիտնական աշխատանքն յանձն առնելու կամ մի բան գրելու։ Այդպէս՝ յայտնի է որ Անանիա Սանաճնեցու Բան հակաժառութեան ընդդէմ երկաթակապ երկը գրուած է Տէր Պետրոս Գետադարձի հրամանաւ. այդ երկի փոքրիկ յառաջարանը որ ուղղուած է յիշեալ հայրապետին, հետեւեալն է. ... Ո՛ր Տէր Հովնապետ շնորհքն առլցեալ երկնայնովք, վերառեսուչ Հայաստանայց և ամենայն աղգաց և ազանց ուղղափառաց, առ որ հրամայեցիք սուղ ինչ տրամաբանեալ ընդդէմ Քաղկեդոնի զորս իբրև ի հայելոյ յայտնի ցուցցուք և ի դրոց սրբոց, յառաքելական և ի մարգարէական մատենից և ի սրբոց հոգեւոր վարդապետաց ... և ինչ։ Սակայն նախ քան երկիս վերջացնելը Տէր Պետրոսը վախճանուած է լինում և այդ պատճառով Անանիան իւր երկը նուիրում է նրա յաջորդ Խաչիկ կաթողիկոսին (1054—1060) հետեւեալ վերջաբանով. «Բայց արդ՝ առեալ զադքատ իմոց մտաց ընկալցիս զպտուղ, ո՛վ դերազարդ և ամենիմաստ հանձնարով առլցեալ Տէր Խաչիկ, վերադիտող Հայոց Մեծաց փոխանորդ մեծի Լուսաւորչին, թէ և ոչ դյուսեալ կատարեալն սակայն ըստ կարի մերում զյօժարութիւն լիապէս ցուցեալ, յազազս որոյ ազաչեմ ըստ աղքատասուր արոց տառապելապետ այրւոյն այնորիկ համարեցին զվարձաշնորհին որ ոչ ըստ արոցն այլ միայն հուրում յօժարութեան ընդ քաջահաւանսն գո՛ր

* Տես. Արարես 1901 թ. հմ. Ե. էջ 2.